

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՐՈՇ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ՃՇԳՐՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԱՆԻ ՍԵՊԱԳԻՐ (ՈՒՐԱՐՏԱԿԱՆ)  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ՍԱՐԳԻՍ ԱՅՎԱԶՅԱՆ

Վանի սեպագիր արձանագրությունների լեզուն՝ ուրարտերենը, եղել է Վանի թագավորության (Ուրարտուի) պաշտոնական գրավոր լեզուն: Մեր կարծիքով՝ նրա հիմքում ընկած է հայերենը<sup>1</sup>, և այն պարունակում է հայերեն բազմաթիվ բառարմատներ, ձևայիններ (բնիկ և անհայտ ծագման) ու հայկական անուններ: Վանի սեպագիր արձանագրությունները թվագրվում են ն.թ. IX–VI-րդ դարերով, այսինքն՝ վաղ գրաբարյան տեքստերից հին են 1000–1300 տարով: Եվ բնական է, որ դրանք կարող են պարունակել այդ շրջանի հայերենի հնչյունական համակարգին հատուկ տվյալներ: Ըստ այդմ՝ կարևորվում է հին հայերենի (գրաբարի) և ուրարտերենի հնչյունական համադրումը, ինչն էլ թույլ կտա ճշգրտել հայերենի որոշ պատմական հնչյունափոխությունների ժամանակաշրջանը, պարզաբանել հնչյունափոխություն ապրած հայերենի համապատասխան հնչյունների վիճակը վաղ գրաբարյան վկայություններից հազար և ավելի տարի առաջ:

Ցավոք, սեպագիր համակարգին բնորոշ բազմարժեքությունը, հատկապես միևնույն շարքի բաղաձայնների հերթագայությունները (d/t, g/k/q, p/b, š/s և այլն) և հնչյունների արտացոլման սահմանափակ հնարավորությունը [ուրարտական սեպագիր համակարգը տարբերում է ընդամենը 24 հնչյուն (նշան)՝ 4 ձայնավոր, 18 բաղաձայն և 2 կիսաձայնավոր] խաթարում են հին հայերենի և ուրարտերենի հնչյունական համադրման ընդհանուր պատկերը: Օրինակ, եթե վերցնենք սեպագիր abeli- (վանկագիր՝ a-bi/n-li/e-) «հավելել, ավելացնել» - հին հայերեն (այսուհետև՝ հհայ.) աւելի համապատասխանությունը, ապա դրանից ամենևին էլ չի բխում, որ հհայ. աւելի-ն ուրարտական շրջանում պարտադիր հնչել է այնպես, ինչպես գրված է սեպագրերում՝ \*աբելի: Իրականում սեպագիր b-ն կարող էր արտասանվել ինչպես /b/ (կամ /bʰ/), այնպես էլ /v/w/: Իսկ եթե նկատի ունենանք նաև այն իրողությունը, որ սեպագրերում b նշանը գրեթե միշտ հերթագայում է p-ին, ապա նաև՝ /p/ և /pʰ/: Դեռ ավելին, այս b և p նշանները կարող են արտացոլել նաև սեպագրերում համա-

<sup>1</sup> Մանրամասն տես՝ Ե. S. A y v a z y a n. Urartian-Armenian: Lexicon and Comparative-Historical Grammar, Yerevan, 2011. Այս մասին տե՛ս նաև Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին. – ՊԲՀ, 2000, -1, էջ 124–129, Վ. Ս ա ր գ ա յ ա ն. Ուրարտական քաղաքակրթությունը և բասկերի նախահայրենիքի հարցը, Երևան, 1998 և այլն:

պատասխան նշան չունեցող որևէ այլ, մոտ հնչող հնչյուն՝ օրինակ /f/-ն: Ըստ այդմ՝ պարզ չէ, թե ինչպես պետք է հնչյունադարձել ուրարտ. abeli-ն՝ /abeli/, /aweli/, թե, միգուցե, մեկ այլ ձևով: Այդ պատճառով հաճախ գործնականում անհնար է դառնում հայերենի հնարավոր շատ հնչյունափոխությունների կամ դրանց բացակայության արձանագրումն ուրարտական տեքստերում՝ ուղղակի մեթոդներով:

Այնուամենայնիվ, հին հայերեն բնիկ բառերի ու ձևայինների և դրանց հնդեվրոպական նախատիպերի համադրումն ուրարտական տեքստերում առկա զուգահեռ ձևերի հետ հնարավորություն է տալիս ստանալ հ.-ե. վերականգնվող (հիպոթետիկ) հնչյուն → ուրարտական նշան → հին հայերեն (տառա)հնչյուն համապատասխանությունները: Դրանց զուգորդումն ուրարտական տեքստերում վկայված հայերենի փոխառյալ և անհայտ ծագմամբ բառերի համադրումից ստացվող տվյալների հետ թույլ է տալիս կատարել որոշակի հստակեցումներ մեզ հետաքրքրող հարցում<sup>2</sup>:

Քննենք մի քանի այնպիսի դեպքեր, որոնցում հստակ երևում են վաղ գրաբարյան և ուրարտական տեքստերում առկա հնչյունական տարբերությունները:

1. Բառային համադրումներ, որոնցում բառակզբում հ.-ե. \*վ-ից ծագող հին հայերենի գ-ի դիմաց ուրարտերենում ունենք u/w նշանները, ինչից երևում է, որ Վանի թագավորության շրջանում հայերենի \*վ > գ հնչյունափոխությունը դեռևս չէր կատարվել կամ գտնվում էր մի այնպիսի միջանկյալ վիճակում, որ վերոնշյալ դիրքում հ.-ե. \*վ-ն ուրարտական սեպագրերում արտացոլվում է u/w նշաններով: Տե՛ս հետևյալ օրինակները. ա) ուրարտ. wal=d-□ հաղթահարել, հաղթել, գերազանցել, տապալել (հակառակորդի մարտակառքերն) և այլն □ [թոփուզավայի երկլեզվյա արձանագրությունում համապատասխանում է արք. le`u-ին «հաղթահարել, հաղթել (նաև իրավական վեճում), գերազանցել, առավելել» իմաստով]– հհայ. գլ-տ-որ-եմ, գլ-եմ, գլ-եց-ուց-ան-եմ «գլորել, հաղթել, հաղթահարել (նաև վեճի մեջ՝ խոսքով), գերազանցել, գորել, առավելել, իշխել», «շրջել, տապալել, կործանել» և այլն < \*վē-, \*վl-<sup>3</sup>, բ) ուրարտ. Uelekuni (վանկագիր՝ Զ-e-li/e-ku-ni) «Մևանի ափին գտնվող երկրամասի անվանում» – ակնհայտորեն համապատասխանում է հհայ. Գեղա(ր)քունի տեղանվանը<sup>4</sup>, ուրարտ. Waša (վանկագիր՝ Wa-š/za-) «տեղանուն, համապատասխանում է պատմական Արագածոտն գավառին»<sup>5</sup> – հհայ. \*Արա-գածա > Արագած, -այ)<sup>6</sup> և այլն:

<sup>2</sup> Տե՛ս U. Այվազյան. Ուրարտերեն-հայերեն. բառապաշար և պատմահամեմատական քերականություն (այսուհետև՝ ՈՒՀ), Երևան, 2008, էջ 26–37, 354–365, նույն ի՛նչ՝ Ուրարտերեն, Երևան, 2013, էջ 24–27, 118:

<sup>3</sup> Տե՛ս U. Այվազյան. ՈՒՀ, էջ 52, 105–107 և այլն:

<sup>4</sup> Տե՛ս Գ. Ղափանցյան. Նոր Բայազետի սեպագիր արձանագրությունը, Երևան, 1930, էջ 1–34, Н. А р у т ю н я н. Корпус урартских клинообразных надписей (այսուհետև՝ КУКН). Ереван, 2001, с. 527 և այլն:

<sup>5</sup> Այս երկրամասի տեղաբաշխման մասին տե՛ս Н. А р у т ю н я н. Топономика Урарту. Ереван, 1985, с. 13–14; նույն ի՛նչ՝ КУКН, с. 499–500:

<sup>6</sup> Տե՛ս U. Այվազյան. Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները, I, Երևան, 2004, էջ 75, նույն ի՛նչ՝ ՈՒՀ, էջ 36 և այլն:

2. Բառային համադրումներ, որտեղ բառասկզբում *h.-ե. \*p-ից* ծագող *հհայ. h/ʔ* դիմաց ուրարտերենում ունենք *p/b* նշանները, ըստ այդմ, պետք է ենթադրել, որ Վանի թագավորության շրջանում հայերենի *\*p > h/ʔ* հնչյունափոխությունը դեռևս չէր կատարվել կամ գտնվում էր մի այնպիսի միջանկյալ վիճակում, որ վերոնշյալ դիրքում *h.-ե. \*p-ն* ուրարտական սեպագրերում արտացոլվում է *p/b* նշաններով: Տե՛ս հետևյալ օրինակները. *ա) ուրարտ. նիդ. pare* «դեպի, մինչ, մտո», *par-* «հեռացնել, տանել»- *հհայ. նիդ. առ* «մինչ, դեպի, առ, մտո, կողքին», *հեռ-աց-ուց-ան-եմ* «տանել, հեռացնել», «անցկացնել» < *\*pors* (*\*per-*) «անցկացնել» (բ) *bedi* «կողմը, էտեր, հետը/միասին», *bed-* «ետ դառնալ, էտ տալ, վերադարձնել», *bedu=iaše* «վերադարձին/վերադառնալիս» կամ «հետո, այսուհետև» – *հհայ. հետ, -ոյ* «ոտք, հետք», *հետի* (նախադրություն) «ետևից, թիկունքից», «միասին, հետք, մեկտեղ», *յետ, էտ* «ետև, էտ, հետո, վերջը», (մակբայ) *յետոյ* «հետո, այնուհետև, ապա» և *այլն* (նախնական իմաստն է «ոտք, հետք») < *\*pedo/i* «ոտք», *թերևս, նաև q*) *pile* «ջրանցք, առու» – *հհայ. հեղ* «ջրի հոսք» < *\*pel-* «հոսել»: Վերջինիս համար հնարավոր է նաև համեմատումը պեղ «փոս, խրամատ» հայերեն բառի հետ<sup>7</sup>:

Հարկ ենք համարում նշել, որ սեպագրերի ոչ ճիշտ ընկալման հետևանքով, որոշ հետազոտողներ, շփոթելով գիրը (գրաֆիկան) արտասանության հետ, հաճախ կատարում են սխալ և հակասական եզրակացություններ: Այսպես, քննադատության են ենթարկվում մեր որոշ ստուգաբանությունները՝ դա հիմնավորելով մեր կողմից հնչյունական օրենքների գործառնման «ոչ ճիշտ ընկալման»<sup>8</sup> պնդումով: Օրինակ՝ անդրադառնալով մեր կողմից նշած *հայ-ուրարտական ուրարտ. pai/a=ne* «խոշոր եղջերավոր անասուն»- *հհայ. պախրե* «նույնը», *ուրարտ. par-* «քշել (անասուն), տանել (գերիներ)»] - *հհայ. հեռ-աց-ուց-ան-եմ* < *\*per-*, *ուրարտ. pile* «ջրանցք», (խոտերեն *pala* «ջրանցք») – *հհայ. պեղ* < *\*bel*, կամ *հեղ-եմ* < *\*pel* և այլ համապատասխանություններին նշում են, որ ուրարտական տեքստերում վկայված բառասկզբի *p-ն* չէր կարող մի դեպքում անհետանար կամ դառնար *h*, իսկ մյուս դեպքում պահպանվեր<sup>9</sup>: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, *ուրարտ. p* նշանի տակ մի դեպքում կարող է թաքնվել խուլ պայթական /p/-ն, իսկ մեկ այլ դեպքում՝ խուլ-շնչեղ /p'/ կամ շփական /f/ հնչյունները: Պատահական չէ, որ բառասկզբի *p* նշանը մի դեպքում հնչյունադարձում ենք *փ* պայմանական նշանով<sup>10</sup>, մյուս դեպքում /p/-ով կամ /p'/-ով: Ինչ վերաբերում է հայերենի *h.-ե. \*p > h/ʔ* անցմանը, ապա ակնհայտ է, որ սույն անցումը մեկ ակնթարթում չի կատարվել, այլ ունեցել է երկարատև գործընթաց՝ միջանկյալ վիճակ(ներ)ով<sup>11</sup>: Հետևաբար *h.-ե. \*p-ն* ուրարտական

<sup>7</sup> Մանրամասն տե՛ս Մ. Այվազյան. Ու՛շ, էջ 50–51, 95–96, ն ու յ ն ի՛ Ուրարտերեն, էջ 84–85, 99–100 և այլն:

<sup>8</sup> Տե՛ս Պ. Ղ ա փ ա ն ց յ ա ն. Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 39, Գ. Դ յ ա կ յ ա ն. Урартский и индоевропейские языки. Ереван, 1963, с. 101:

<sup>9</sup> Տե՛ս Մ. Ա ղ ա բ ե կ յ ա ն. Հայ-ուրարտական ստուգաբանական դիտարկումներ.– ՊԲՀ, 2013, -1, էջ 170–171:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>11</sup> Տե՛ս Մ. Ա յ վ ա զ յ ա ն. Ու՛շ, էջ 36, 50–51, 95–96 և այլն:

<sup>12</sup> Տե՛ս Պ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Երևան, 1987, էջ 227, 346 և այլն:

շրջանում կարող էր գտնվել հենց այդպիսի մի միջանկյալ վիճակում, օրինակ, հնչեր /f/<sup>13</sup> և, բնականաբար, ենթարկվեր հետագա հնչունափոխության (f > h/ք)՝ ի հակադրություն հ.-ե. \*b-ից ծագած կամ օտար փոխառություններից հնագույն հայերենին անցած /p/-ի: Ըստ այդմ՝ վերոնշյալ անցման համար հնարավոր է վերականգնել հետևյալ հերթականությունը՝ հ.-ե. \*p > հնագույն հայերեն /f/ (ուրարտական գրում արտացոլվում է p/b նշաններով) > հհայ. հ/ք:

Ինչ վերաբերում է միջնափոխության կամ բաղաձայնին նախորդող դիրքում հ.-ե. \*p-ից ծագող հհայ. ւ(վ)-ի արտացոլմանն ուրարտական արձանագրություններում, ապա այստեղ մի կողմից այն նշանատվում է u/w նշաններով, ինչպես՝ ուրարտ. eue/ewe «և» – հհայ. և «և» < հ.-ե. \*epi, ուրարտ. Tuarašinei hubi «Tuarašine-ի դաշտ/հովիտ» – հհայ. տուար-ածա-տափ «նույն դաշտավայրի անվանումը» (կազմված է հհայ. տուար «տավար» < \*dīr̥so բառարմատից), մյուս կողմից b-ով, ինչպես՝ ուրարտ. aršibi – հհայ. արծուի (-ծիւ) «արծիվ» < հ.-ե. \*rgFiri-jo: Եթե վերոբերյալ հայերեն բառերի ստուգաբանությունը ճիշտ է, ապա պետք է ենթադրել, որ հայերենի տվյալ անցումն արդեն ավարտվել էր կամ գտնվում էր ավարտման փուլում՝ համենայն դեպս ուրարտական շրջանում այս \*p-ն հնչում էր /w/-ին մոտ: Իսկ ուրարտ. aršibi գրության առկայությունը, սպասվելիք \*aršwi-ի կամ \*aršai-ի փոխարեն, հեշտորեն բացատրվում է ուրարտական տեքստերում /w/ հնչյունը b/p նշաններով արտացոլելու հնարավորությամբ, ինչը հատուկ է նաև այլ սեպագիր լեզուների:

Պատկերն այլ է նույն դիրքում հ.-ե. \*b<sup>h</sup>-ի դեպքում, որի համար առկա երկու վկայությունում ունենք միայն ուրարտ. b, բայց ոչ u/w, ինչպես՝ abeli- «հավելել» – հհայ. աւելի, յ-աւել-եմ «հավելել» < \*obhel, qaburza «կամուրջ» – հհայ. կամուրջ, ի-ա «կամուրջ» < \*կաւուրջա < \*g<sup>o</sup>obhur-ja (հմմտ. հուն. γέφυρα, հայ-հունական գուգաբանություն):

Տեղանուններում և անհայտ ծագում ունեցող բառերում պատկերը խառն է. օրինակ՝ Abuni – հհայ. Հաւունի-ք, Zabahae – հհայ. Ջաւախ-ք (սեռ. Ջաւախաց), Er(e)bune – հհայ. Երեւան, Abeliane – հհայ. Աբելեան-ք, babane «սար, լեռ» – հհայ. բաբայ «բլուր» և այլն: Նման պատկերը ակնհայտորեն պայմանավորված է սեպագրերի վերոնշյալ առանձնահատկություններով և բնորոշ է սեպագիր գրերէ բոլոր լեզուներին: Եթե նույնիսկ հայտնի է փոխատու լեզուն և այնտեղ առկա համապատասխան գուգահեռ վկայությունները, միննույն է որոշակիություն չի նկատվում այդ հարցում: Օրինակ՝ վերոնշյալ ուրարտ. babane □սար, լեռ□ բառի գուգահեռ ձևը խուռական տեքստերում վկայված է մեկ pabni, մեկ wawan- տարբերակներով (վանկագիր՝ pa-ab-ni, wa-wa-n-), իսկ Ուգարիթյան բաղաձայնագիր քվագիայբենական սեպագրում՝ [pbn]:

Բառասկզբում հ.-ե. \*b<sup>h</sup>-ի դիմաց ուրարտական արձանագրություններում կանոնավոր կերպով ունենք b նշանը, ինչպես՝ ա) հ.-ե. \*b<sup>h</sup>er- «բերել, տանել» – ուրարտ. (-)ber- «բերել, գալ» – հհայ. բեր-եմ «բերել», բ) հ.-ե. \*bhag-to «բաժին» – ուրարտ. baqtu «բախտ» – հհայ. բախտ, -ոյ □բախտ□ (իրանական միջնորդավորմամբ, բնիկ ձևն է՝ \*բալտ, -ոյ < \*bhag-to, ինչը վկայված է ուրարտական տեքստերում), գ) հ.-ե. \*bhā ,խոսելէ – ուրարտ. ba-u- ,խոսք, հրաման, բանե – հհայ. բա-ն, բա-յ ,խոսք, բանե, գ) հ.-ե. \*bhr̥gFh ,բարձր, վերե – ուրարտ.

<sup>13</sup> Նման միջանկյալ վիճակ է առաջարկում Գ. Ջ ա հ ու կ յ ա ն ը. տե՛ս նույն տեղում:

barzu/i=dibidu(ne) ,պաշտամունքային ինչ-որ շինության անվանումե – հիայ. բարձ, -ու/ի ,բարձր, վերե, բարձունք ,բազինք, տաճարք, սեղանքե<sup>14</sup> :

Համառոտ անդրադառնանք նաև ուրարտերենի էրգատիվ կառուցվածք ունենալու խնդրին, քանզի մասնագիտական գրականության մեջ հաճախ այս փաստը մատնանշվում է ուրարտերենի հայկական բնույթը բացատելու համար<sup>15</sup> : Մակայն նման փաստարկը ակնհայտորեն հնացած է: Նախ՝ նշենք, որ, համաձայն արդի հետազոտությունների, աշխարհի լեզուների մոտ մեկ քառորդը ունի էրգատիվ կառուցվածք, այդ թվում նաև մի շարք հնդեվրոպական լեզուներ (խեթերեն, լուվիերեն, իրանական շատ լեզուներ, հինդի և այլն)<sup>16</sup> : Դեռ ավելին, փաստերը վկայում են, որ մեր տարածաշրջանի բազմաթիվ լեզուներ, անկախ ծագումից, ունեցել են էրգատիվ բնութագիր<sup>17</sup> : Իսկ էրգատիվ կառուցվածքից դեպի նոմինատիվ և հակառակ տիպի անցումները ոչ միայն արտառոց երևույթներ չեն, այլև ճիշտ հակառակը<sup>18</sup> : Ինչ վերաբերում է կոնկրետ ուրարտերենին (նաև խուրերենին), ապա վերջիններիս էրգատիվ կառուցվածքը, ըստ որոշ արդի հետազոտությունների, վաղ նախահնդեվրոպական լեզվի ակտիվ տիպի կառուցվածքի զարգացման արդյունք է<sup>19</sup> :

Հետևաբար, ուրարտերենի՝ էրգատիվ կառուցվածք ունենալու իրողությունը չի կարող հիմնավոր փաստարկ ծառայել նրա հայկական բնույթը մերժելու պնդման մեջ:

<sup>14</sup> Հիայ. բարձունք բառի նման իմաստի համար տե՛ս Հ. Ամալյան. Բարձիրք Հայոց, Երևան, 1975, էջ 52:

<sup>15</sup> Տե՛ս Մ. Աղ ա բ է կ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 176–177:

<sup>16</sup> Մանրամասն այս մասին տես՝ R. Dixon. Ergativity, Cambridge, 1998 (first published 1994), pp. 2–5, 14: ի»օ՞ Կ<sup>3</sup>» B. Comrie. The languages of the Soviet Union, Cambridge, 1981, pp. 173–174, 177, 181; J. Payne. The decay of ergativity in Pamir languages, *Lingua*, 51/2-3, 1980, pp. 147–186; V. Miltner. Ergative Constructions in Indo-Aryan.– *Archiv Orientalni*, 59, 1991, pp. 225–233; Y. Kachru. Ergativity, subjecthood and topicality in Hindi-Urdu.– *Lingua*, 71, 1987, pp. 223–238; A. Garrett. The origin of NP split ergativity.– *Language*, 66, 1990, pp. 261–296; A. Korn. The Ergative System in Balochi from a Typological Perspective, *Iranian Journal of Applied Language Studies*, 1/1, 2009, pp. 43–75 և այլն:

<sup>17</sup> Տե՛ս R. Dixon. Նշվ. աշխ., էջ 2–3: Նա ուղղակի գրում է. «Թվում է, թե աշխարհի այդ մասում(նկատի ունի՝ Փոքր Ասիան, Հայկական լեռնաշխարհը, Կովկասը, Միջագետքը և հարակից տարածքները) այդ ժամանակ առկա էր «լեզվական տարածք»՝ բաղկացած մեկուսի կամ փոքր ենթախմբերով մի շարք լեզուներից, որոնք ծագումնաբանորեն չեն առնչվում միմյանց հետ, սակայն բոլորը ցուցաբերում են էրգատիվ բնութագիր»:

<sup>18</sup> Այս մասին մանրամասն տե՛ս R. Dixon. Նշվ. աշխ., էջ 182–206:

<sup>19</sup> Տե՛ս A. Fournet, A. Bomhard. The Indo-European Elements in Hurrian, *La Garenne Colombes/Charleston*, 2010 ([www.academia.edu/642012/The Indo-European Elements In Hurrian](http://www.academia.edu/642012/The_Indo-European_Elements_In_Hurrian)), pp. 154–155:

ВОЗМОЖНОСТЬ УТОЧНЕНИЯ ВРЕМЕНИ НЕКОТОРЫХ ФОНЕТИЧЕСКИХ  
ИЗМЕНЕНИЙ АРМЯНСКОГО ЯЗЫКА  
С ПОМОЩЬЮ ВАНСКИХ (УРАРТСКИХ) КЛИНОПИСНЫХ НАДПИСЕЙ

САРГИС АЙВАЗЯН

Р е з ю м е

Урартский язык, который, на наш взгляд, является некой формой древнейшего армянского языка, старше древнеармянского (грабара) на 1000-1300 лет и имеет черты, характерные для фонетической системы армянского языка данного периода. Их сравнение с древнеармянским языком позволяет уточнить время некоторых фонетических изменений армянского языка. Так, в инициале слова, на месте древнеармянского *h/ш*, восходящего к и.-е. \**p*, в урартских текстах засвидетельствованы знаки *p/b*, которые в этом случае, вероятно, произносились как */f/* – отражая возможное промежуточное состояние перехода \**p* > *h/ш* (\**p* > \**f* > *h/ш*). В том же положении, на месте древнеармянского *g*, восходящего к и.-е. \**q*, засвидетельствованы знаки *u/w*. В межгласной позиции, или в позиции перед согласным, произношение и.-е. \**p*, скорее всего, изменилось и в урартских текстах передается знаками *u/w* или *b*, которые, вероятно, произносились как */w/*. Что касается и.-е. межгласного \**b(h)*, то оно в урартских текстах везде передается знаком *b*, произношение которого в этом случае не ясно.

THE VERIFICATION POSSIBILITY OF SOME ARMENIAN PHONETICAL  
CHANGES PERIOD WITH THE VAN (URARTIAN) CUNEIFORM INSCRIPTIONS

SARGIS AYVAZIAN

S u m m a r y

The Urartian, in our opinion, one of the forms of the ancient Armenian language, is 1000-1300 years older than early Old (Classical) Armenian and has facts peculiar to phonemic system of the Armenian language of this period. The phonetic comparison of these evidences with the Old Armenian allows specifying the period of some phonetic developments of the Armenian. Thus, in the word-initial position in the place of the old Armenian *h/ø* derived from the PIE. simple voiceless \**p*, in Urartian language we have *p/b* signs, which, probably, had been pronounced */f/* reflecting the possible intermediate state of the \**p* > *h/ø* development (\**p* > \**f* > *h/ø*). And, in the same position, in the place of Old Armenian *g*, which derives from the PIE. \**q*, the Urartian has *u/w* signs. Already in that period, in the intervocalic or preconsonantal position the PIE. \**p*, most likely, had been changed and in the Urartian texts it was written with *u/w* or *b* signs, which, probably, were pronounced */w/*. As for intervocalic \**b(h)*, it is everywhere attested as *b*, the pronunciation of which in this case is not clear.